ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 13-ին, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ՝ մեռելոց հիշատակին։ Օրվա պատարագիչն էր բարձրապատիվ Տ. Գեորգ ծայրագույն վարդապետը։ Սուրբ պատարագի ավարտից հետո տեղի ունեցան հոգեհանգստյան արարողություններ «վասն համօրէն ննջեցելոց»։

***

Սեպտեմբերի 20-ին, Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի տեսուչ նշանակվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Մարտիրոս Տեր-Ստեփանյանը։

***

Սեպտեմբերի 21-ին գերաշնորհ Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, նորընծա Տ. Եղիշե աբեղայի ընկերակցությամբ, մեկնեց Կիսլավոդսկի բուժավայրը։

***

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, նկատի ունենալով պարոն Ֆ. Բոռչանյանի ծերությունը և նրա բարեխիղճ աշխատանքը Մայր Աթոռում, նշանակեց նրան կենսաթոշակ՝ սեպտեմբերի 1-ից ազատելով նրան Հոգևոր Ճեմարանի դասախոսական պարտականություններից։

***

Սեպտեմբերի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց թուլղարական դերասանների պատգամավորությունը, որի կազմի մեջ էին Բուլղարական Ժողովրդական Ռեսպուբլիկայի վաստակավոր դերասան, Սոֆիայի օպերայի մենակատար Իլյա Իոսիֆովը (տենոր), Բուլղարական Ժողովրդական Ռեսպուբլիկայի վաստակավոր դերասան, Սոֆիայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Նեդյալկա Սիմիոնովան (ջութակահար), Սոֆիայի օպերայի մենակատար Նատյա Աֆեյան (մեցցո-սոպրանո), Սոֆիայի ռադիոյի մենակատար Իովչո-Կարա-Իվանովը (տենոր), Սոֆիայի ռադիոյի մենակատար Ցվատկո Բլագոյևը և Սոֆիայի օպերայի կոնցերտմեյստեր Էլենա Մինդիզական։ Հյուրերը եղան Տաճարում և Տաճարին կից եկեղեցական-հնագիտական թանգարանում։ Հյուրերին մանրամասն բացատրություններ և տեղեկություններ էր տալիս Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։ Վերջում հյուրերը սրտագին իրենց շնորհակալությունները հայտնեցին Մայր Աթոռի միաբանությանը՝ իրենց ցույց տրված ջերմ և լավագույն ընդունելության համար։

***

Սեպտեմբերի 25-ին, հանգուցյալ Հայրապետի անվանակոչության օրը, մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր բարեշնորհ Տ. Կոստանդին վարդապետը։ «Հայր մերից առաջ բարձրապատիվ Գեորգ ծայրագույն վարդապետը քարոզ խոսեց։ Հայր սուրբը զգացված բառերով մի անգամ ևս ոգեկոչեց հանգուցյալ մեծագործ և հայրենասեր Հայրապետի կյանքն ու գործունեությունը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ Վեհափառի շիրիմի վրա։

***

Սեպտեմբերի 26-ին, Վարագա Ս. Խաչի տոնի օրը, հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց բարձրապատիվ Տ. Գեորգ ծայրագույն վարդապետը, որը և քարոզ խոսեց Վարագա Ս. Խաչի նշանակության մասին։

***

Հոկտեմբերի 10-ին, «Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն» և ի հիշատակ հայկական նշանագրերի գյուտի ու սուրբ գրոց թարգմանության, եկեղեցական-ազգային տոնի առթիվ, Հոգևոր Ճեմարանում կազմակերպվեց գրական երեկո։ Նույն օրը լրանում էր երաժշտագետ Կոմիտաս վարդապետի ծննդյան 85-ամյակը և բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի մահվան 25-ամյակը։ Վերատեսուչ պարոն Մարտիրոս Տեր-Ստեփանյանը իր բացման խոսքում նշելով թարգմանիչ վարդապետների կատարած դերը, խոսեց նաև երաժշտագետ Կոմիտաս վարդապետի և բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի մասին։ Ուսանողները երգեցին «Որք զարդարեցին» շարականը, որից հետո ղեկուցեց շնորհունակ Գուրգեն սարկավագը։ Ուսանողները հանդես եկան արտասանություններով և երգերով։ Վերջում դերաշնորհ Սահակ սրբազանը «Պահպանիչ»ով փակեց երեկոն։

***

Հոկտեմբերի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Շվեդիայի ուսուցիչների պատգամավորությունը՝ բաղկացած 10 հոգուց։ Վանքում հյուրերին ջերմ ընդունելություն ցույց տրվեց։ Հյուրերը եղան Տաճարում և Տաճարին կից հնագիտական թանգարանում։ Երեկոյան, հարուստ տպավորություններով, հյուրերը մեկնեցին Երևան։

***

Հոկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Չեխոսլովակա-Սովետական բարեկամության միության պատգամավորությունը։ Պատգամավորությանը գլխավորում էր Բռնոյի համալսարանի ռեկտոր ակադեմիկոս Ֆրանտիշեկ Տրավնիչեկը։ Պատգամավորության կազմի մեջ մտնում են հասարակական գործիչներ, գիտության, արվեստի ու գրականության աշխատողներ։ Հյուրերը եղան Տաճարում և Տաճարին կից եկեղեցական-հնագիտական թանգարանում, ուր Տիգրան սարկավագը մանրակրկիտ բացատրություն տվեց եկեղեցական թանկագին և արժեքավոր սպասների, իրերի ու գրքերի մասին։ Վերջում պատգամավորության անունից Ֆրանտիշեկ Տրավնիչեկը շնորհակալություն հայտնեց սարկավագին։ Հյուրերը մեկնեցին Էջմիածնից հարուստ տպավորություններով։